

Դաշնակցությունը պատրաստ է հրաժարվել պետական պաշտոններից

Հայ Հեղափոխական Դաշնակցության Հայաստանի Գերագույն Մարմինը հանդես է եկել հայտարարությամբ, որում ներկայացված է կուսակցության դիրքորոշումը՝ նախագահի ընտրությունների արդյունքների եւ ստեղծված ներքաղաքական իրավիճակի վերաբերյալ: Դրանում ասված է, որ ամփոփելով բոլոր մարզերից ու տեղամասերից ստացված զեկույցները, նկատի ունենալով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալները եւ միջազգային հանրության՝ հիմնականում դրական արձագանքը՝ ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմինը չի վիճարկում ընտրությունների վերջնական արդյունքները եւ հաջողություն է մաղթում նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանին: Միաժամանակ, պահանջել են ամբողջական քննության ենթարկել ընտրակեղծիքների բոլոր փաստերն ու պատժել մեղավորներին:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմնի այսօր տարածած հաղորդագրության համաձայն, կուսակցությունը դիմել է կոալիցիոն գրոծընկերներին՝ համագործակցությունը դադարեցնելու առաջարկով. «Հավատարիմ մնալով 2007 թվականին ստորագրած համագործակցության համաձայնագրին, մենք հանդես ենք գալիս կուսակցության ստանձնած պետական պաշտոններից հրաժարվելու պատրաստակամությամբ եւ դիմում ենք քաղաքական կոալիցիային՝ համագործակցությունը դադարեցնելու առաջարկով»:

Կուսակցության տարածած հաղորդագրության մեջ անդրադարձ է եղել նաեւ քարոզարշավին ու փետրվարի 19-ի ընտրություններին: «Դրանք մեր երկրի հետագա ժողովրդավարացման ճանապարհին հերթական փորձությունն էին: Մենք կարող ու պարտավոր էինք այդ փորձությունից դուրս գալ ավելի միասնական եւ ամրացած: Այդպես չեղավ մի շարք պատճառներով. ընտրարշավի ամբողջ ընթացքում գերակայեցին փոխադարձ թշնամանքն ու ատելությունը, անհանդուրժողականությունն ու սպառնալիքները»,- ասված է հայտարարության մեջ:

«Հասարակությունը արհեստականորեն երկփեղկվեց ու բեւեռացվեց: Մի կողմից ցանկացած եղանակով իշխանափոխություն իրականացնելու՝ ներխուժող մոլեռանդությունն էր, մյուս կողմից՝ ամեն գնով սեփական դիրքերը պահպանելու՝ ներկաների ձգտումը: Դաշնակցության թեկնածուն հնարավոր ամեն բան արեց մրցակցությունը ծրագրային, գաղափարական հունի մեջ պահելու, երկրի զարգացումը առողջ մթնոլորտում շարունակելու համար, սակայն այս մոտեցումը, ցավոք, լայն արձագանք չգտավ: Մեր թեկնածու Վահան Հովհաննիսյանը ընտրարշավի ողջ ընթացքում ցուցաբերեց սկզբունքային վարքագիծ ու դիրքորոշումներ եւ հարազատորեն ներկայացրեց ՀՅԴ-ն»,- հայտարարում է ՀՅ Դաշնակցությունը:

«Բուն ընտրությունները եւս ուղեկցվեցին տարաբնույթ խախտումներով: Համատարած, բացահայտ ու քողարկված ընտրակաշառքով զբաղվեցին առաջատար թեկնածուների կողմնակիցները, որոշ տեղամասերում կոպիտ բռնության, լցոնումների դեպքեր արձանագրվեցին, խախտումներով ընթացավ նաեւ քվեների հաշվարկման փուլը: Արդյունքում՝ ընտրությունների վերաբերյալ մեր քաղաքացիների գնահատականը միանշանակ չէ, եւ այսօր էլ առկա է հասարակական լարվածություն, երկիրը կանգնած է ետընտրական բեւեռացումը կանխելու եւ համերաշխության մթնոլորտը վերականգնելու հրամայականի առաջ: Ներկա իրավիճակում մենք պատրաստ ենք կամրջողի դեր ստանձնել»,- շարունակել են հայտարարության հեղինակները: Միաժամանակ, առաջնորդվելով երկրի կայունության եւ առաջընթացի հրամայականներով, նրանք պահանջում են.

1. անաչառ ու ամբողջական քննության ենթարկել ընտրակեղծիքների բոլոր փաստերը եւ պատժել մեղավորներին
2. դատապարտել իշխանությունը բռնի ուժով փոխելու, ինչպես նաեւ ընտրությունների արդյունքներից դժգոհողների հանդեպ բռնություն կիրառելու մտայնությունը
3. շուտափույթ քայլեր ձեռնարկել Հայաստանի միջազգային հեղինակությունն ամրապնդելու, ներքին լարվածությունը մեղմելու ուղղությամբ

4. ձեռավորել ընտրական բոլոր գործընթացներում ընտրակաշառքը, ոչ քաղաքական, կիսաքրեական տարրերի մասնակցությունը, իշխանական ռեսուրսի կիրառումը բացառող ընտրական համակարգ,

5. երկրում ապահովել իրական բազմակարծություն եւ խոսքի ազատություն

6. քաղաքական համակարգում ընդդիմության գործունեության համար ապահովել լիարժեք հնարավորություններ,

7. քաղաքական երկխոսության եւ ազգային համաձայնության արդյունքում այնպիսի կառավարություն ձեռավորել, որն իր մասնագիտական, մարդկային-բարոյական որակներով ի վիճակի կլինի երկիրը դուրս բերել ժողովրդավարության եւ սոցիալ-տնտեսական արագընթաց զարգացման մայրուղի:

Հայտարարության վերջում, կուսակցությունը վստահեցնում է, թե շարունակելու են հավատարիմ մնալ իրենց սկզբունքային դիրքորոշումներին եւ պայքարելու են հանուն մեր ժողովրդի, յուրաքանչյուր քաղաքացու իրավունքների պաշտպանության, հանուն մեր պետականության հզորացման: